



ԵՐԿՈՒՇԱՔԹԻ, 12 ՍԵՄՏԵՄԵՐ, 2016

### ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՐՈՐՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն Կբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա Կիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

### ԲԱՆ Ա

Ի ԽՈՐՈՑ ԱՐՏԻ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Սրտիս հեծեծալից հառաչանքներուն ողբաձայն աղաղակը Քեզի կը վերընծայեմ, ո՛վ գաղտնիքները տեսնող Տէր, եւ այրուող հոգիիս թախծութեան կրակին վրայ դնելով սասանած մտքիս նենցներող իղձերուն պտուղը, կամքիս բուրվառովը Քեզի կը ձօնեմ գայն: Գթած, հին Օրէնքի ողջակէզին թանձրածուխ գոհէն աւելի, իմ այս պատարագիս նայէ, եւ հաստատէ գայն: Հանութեամբ եւ ոչ թէ բարկութեամբ ընդունէ այս սակաւամասն խօսքերուն յեռուածքը: Բանական գոհ մըն եմ ես. հոգիիս խորհրդակիր սենեկին զգայութեանց խորքէն ելած կամաւոր նուէրը թող շուտով հասնի Քեզի, մեղքերուս պարարտութեան նարպիս միջոցաւ ողջակիզուելով: Անձիս համար այսպէս աղերսանքով Քեզի հետ դատի մտնելս թող տաղտկալի չթուի Քեզի, Հօր: Դուն միայն կրնաս դարման մը հրաշագործել, վտանգող վարանեցուցիչ շուարումներուն մէջ, ով ամենաբարի Տէր, որ անսահմանելի բարձրութեամբ յաւիտեանս յաւիտենից կը գովուիս աննառելի փառքով: Ամէն:

### ՇԱՐԱԿԱՆ-ԱՐՈՐՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:*  
*Ամենատարբ Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն:*  
*Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցէրոց արքայութիւն:*  
*Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղէրոց:*  
*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա,*  
*Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

*Պահապան ամենայնի Քրիստոս,  
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի Կուէ եւ ի գիշերի,  
ի նստիլ ի Կան, ի գնալ ի ճանապարհ,  
ի ննջել եւ ի յառնել, Կի մի երբեք սասանեցայց.  
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

# ՕՐՈՒԲԱՆ ՆԻԺԹԸ



## ԵՐԳ ԵՐԳՈՅԻ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԵՐԱԾԱԿԱՆ



Աստուածաշունչ Մաբեանի Հին Կրակարանի բաժինը ունի երեք մասեր.- Օրենք, Մարգարեություն, Գիրքեր: Ահա այս երրորդ բաժինն մաս կը կազմէ «Երգ Երգոց» գիրքը: Աւանդութեան համաձայն Հին Կրակարանի Գիրքեր բաժինն մէջ կան երեք գիրքեր, որոնք կը վերագրուին Սողոմոն Իմաստունին. Առակաց, Ժողովողի, Երգ Երգոց, ինչպէս կը նշուի Գ Թագ 4:32-34ին մէջ: Եբրայական մրաժողութեան համաձայն, այս գիրքի բովանդակութիւնը ցոյց կու տայ որպէս Աստուծոյ սիրոյ երգը հանդէպ Իր ընտրեալ ժողովուրդին, իսկ քրիստոնէական աւանդութեան համաձայն՝ Քրիստոսի սիրոյ երգը հանդէպ Եկեղեցիին:

Այս գիրքի մեկնութեան կամ բացատրութեան համար նկատուի առնուած են քանի մը եկեղեցական հայրերու գրութիւնները. Գրիգոր Նարեկացի եւ Գրիգոր Տաթեւացի:

Ըստ Գրիգոր Նարեկացիի, «Երգ Երգոց» գիրքը նկատուած է որպէս «Օրհնութիւն Օրհնութեանց», երգերու երգը: Ան կ'ըսէ. «Անիկա Հին Կրակարանի պատուականագոյն գիրքն է: Որովհետեւ անոր խորհուրդը անճառելի է, եւ մարմնեղէնները չեն կրնար զայն իմանալ, բացի եթէ հոգի ունին»: «Երգ Երգոց»ի մէջ կան մարմնաւոր առարկաներ, որոնք հոգեւոր եւ ոչ-մարմնաւոր իրականութիւններ նշանակելու համար: Օրինակ. «Փեսայ, հարս, եօթօրորդի, օրիորդ, դուստր, աղանի, սփինք, իւղ, խնձոր, պարսեգ»: Ըստ Գրիգոր Նարեկացիի, ամբողջ նիւթը Քրիստոսի եւ Եկեղեցոյ մասին է: Այս բոլորի մասին Սողոմոն Իմաստուն միայն առարկներով բացատրեց, ըստ Քրիստոսի պատուերին. «Ձեր մարգարիսները խոզերու առջեւ մի նետէք» (Մտթ 7:6): Անոր համար ալ Երգ Երգոց, ըստ Նարեկացիի, ոչ բոլորովին բացայայտ է, եւ ոչ ալ բոլորովին թագուն: Բայց ինչո՞ւ արդեօք Աստուծոյ խորհուրդը մարմնաւոր ցանկութեամբ պարկերացնել: Նարեկացին կը պարասխանէ. «Նախ որովհետեւ մեր ցանկութիւնը աղաւաղուեր է, եւ այնքան օտարցած ենք Աստուծոյ խորհուրդներէն, որուն համար ալ Սուրբ Հոգին Սողոմոնի ճամբով ցոյց կու տայ այդ անբանելի վիճակը»: Անոր համար ալ, որպէսզի կարենանք հասկնալ խորհուրդը մարմնաւոր փոխակերպով հոգեւորը ըմբռնելու: Նարեկացին կը բացատրէ, թէ իսկական ու ճշմարիտ սիրոյ մէջ պիղծ բան չկայ, հարսին ու փեսային միջեւ եղած սերը պիղծ չէ: Այնքան արեւն որ այդ սերը գերծ է խառնակենցաղութենէն, սուրբ է: Հետեւաբար, որովհետեւ Քրիստոսի եւ Եկեղեցոյ միջեւ եղած սիրոյ կապի խորհուրդն է, անոր համար ալ Նարեկացին կ'ըսէ. «Երգ Երգոց գիրքը մեղսասէր միտքէ վեր գիրք է: Սուրբ Հոգիէն գուրկ միտքը չի կրնար ըմբռնել ու հասկնալ ըսուածները: Հակնալու համար պէտք է մաքրել ու սրբել միտքն ու խորհուրդները ամէն քրեակի մարմնական ցանկութիւններէ, որմէ յետոյ ականջ տալ ըսուածներուն: Այսինքն՝ փակել մարմնի ականջները եւ բանալ հոգիի ականջները»: Ահա մեր նախահօրն ու նախամօրն անկումով մարդկային բնութիւնը հինցաւ ու ձերացաւ, ու անոր դիմաց Աստուծոյ նախախնամութեան Աստուծոյ Միածինը շար մը օրինակներով խօսեցաւ, մարգարէներու ճամբով, որպէսզի անկեալ մարդը պարտաստ է իր գալուստին, եւ անգամ մը եւս անոր փալու լուսեղէն պարմուճանը:

Գրիգոր Նարեկացի կը խոստովանի, թէ իր կարողութենէ վեր է այս գործին մեկնութիւնը, բացատրութիւնը: Կ'ըսէ. «Անհրաժեշտ է քզեք ջրլլալ, այլ ունենալ Սուրբ Հոգիի շնորհները: Իմանալով մեր մտային հաստողութեան փկարութիւնը, եւ յուսալով Սուրբ Հոգիին, որպէսզի կարենանք հասկնալ: Կարեւոր է «Լսել» եւ «Տեսնել»»: Կարեւոր է ունենալ Սուրբ Հոգիի շնորհները, որպէսզի մեղքով ձերացած մարդը, վերանորոգուի Քրիստոսի իմաստութեամբ եւ գործութեամբ կարենայ հասկնալու համար ըսուածը, եւ դառնայ վկայ ըսուածներուն: Սուրբ Հոգիի շնորհներով ունենալու աստուածգիտութիւն, Քրիստոսագիտութիւն, այսինքն՝ Քրիստոսի խորհուրդին ճանաչումը, ընդունումը, եւ վկայութիւնը: Առաւել եւս, աստուածային գիտութիւնը ունեցողը հաւարացողն է Քրիստոսի, ու Անոր գալուստին ակնկալութեամբը սպրողը, եւ գիտէ, թէ հաշի պիտի տայ իր խորհուրդներուն, խօսքերուն եւ գործերուն համար: Ուստի ուրկէ՞ եւ ինչպէ՞ս սրանալ Սուրբ Հոգիի շնորհները Մկրտութեամբ եւ Հաղորդութեամբ:

Մարմնաւորը չի կրնար լսել եւ տեսնել աստուածայինը: Նոյնիսկ եթէ լսէ եւ տեսնէ չի կրնար պարմել: Երկնային հոգեւոր ճշմարտութիւնները անլսելի են եւ իրականութիւնները անտեսանելի: Ինչո՞ւ, որովհետեւ մեր աչքերն ու ականջները փակ են մեղքի պարճառով:

## ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ - ԿԵԱՆՔ ԵՒ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Ընդհանրապես ընդունուած է 947-1003 թուականները, որպէս Գրիգոր Նարեկացիի ծննդեան եւ մահուան թուականներ: Ան ծանօթ է որպէս բանաստեղծ, երաժիշտ, Հայ Եկեղեցւոյ փօնելի սուրբերէն մին: Խոսքով Անձեւացիի կրթութեան գաւակը: Իր կրթութիւնը ստացած է Նարեկայ Վանքին մէջ, Անանիա Նարեկացիի շունչով: Ան թէւ ապրեցաւ վանական միջավայրի մէջ, բայց երբեք ինքզինք չմեկուսացուց ընկերութենէն:

Կարելի է ըսել, որ Գրիգոր Նարեկացիի գործերը ընդհանրապէս հասած են մեզի, որոնց մէջ կարելի է տեսնել Գանձարարներ, քաղեր, քարոզներ նուիրուած Ծննդեան, Քրիստոսի Տաճար Ընծայման, Յարութեան, Աստուածածնի, Խաչի: Ունի մեկնողական գրականութիւն ինչպէս Երգ Երգոց գիրքին: Ան ունի նաեւ ներբողներ, իրաւորներ Հաւարքի եւ բարիք վարքի առաքինութեան: Ամենայայտնի գործը եղած է «Մարեան Ողբերգութեան» աղօթամատեանը, երբ ան իր ազատ ժամերուն կը մեկուսանար Նարեկայ վանքի շրջակայքը եղող լեռան մը ճգնարանի քարայրին մէջ, ուր կ'ունենար իր բանաստեղծական ապրումները գրելու իր այս աղօթամատեանը: Այդ ճգնարանը դարեր շարունակ կը դառնայ ուխտարեղի:

95 գլուխներէ բաղկացած Ի խորոց սրբի խօսք ընդ Աստուծոյ աղօթամատեանը, որպէս գլուխ գործոց Գրիգոր Նարեկացիի, աղօթքի ձեով արքայայտուած խօսք է ուղղուած Աստուծոյ, անկեղծ ու անմիջական խոսքովանանք, աղաչանք ու աղերսանք, նաեւ փառաբանութիւն ու մաղթանք: Այս աղօթամատեանի ճամբով ցոյց կու տայ, թէ ինքնամաքման ճամբան անկեղծ խոսքովանութիւնն է, մեղքերու զոյնմը, դիմելով Ամենակալ Աստուծոյ: Որովհետեւ այս բոլորի դարմանը Աստուած Ինք է, թէւ որքան հեռու եւ անհասանելի, բայց նաեւ մօտիկ եւ անբաժանելի: Միջնադարուն այս աղօթամատեանը նաեւ նկատուած է որպէս բուժիչ գործիւն ունեցող:

Իսկ, 977 թ. Գուրգէն իշխանի պատուերով Գրիգոր Նարեկացի յանձն կ'առնէ գրել Երգ Երգոց գիրքի մեկնութիւնը: Երբ պատուերը կը ստանայ, սկիզբը կը հրաժարի այս աշխատանքը յանձն առնելէ, որովհետեւ իր ուժերէն վեր աշխատանքն մըն է, բայց երբ իշխանական պատուերը երկրորդ անգամ կը տրուի, յանձն կ'առնէ, որպէսզի այս անգամ չմեղադրուի անհնազանդութեան մէջ: Բայց այս աշխատանքը կատարելու համար, Գրիգոր Նարեկացի այնպիսի վիճակներէ կ'անցնի, միշտ զգուշութեամբ, որպէսզի յանկարծ իր կատարած աշխատանքը չաղավաղէ Աստուածաշունչ Մարեանի ճշմարիտ պատգամը, որուն համար ալ իրեն կը սպասուի պատիժ եւ դատապարտութիւն: Միւս կողմէ, որովհետեւ ան գիտէ, որպէսզի անգէտ ու քղեր չերեւայ փառամոլութեան հպարտութենէն թելադրուած այս անգամ այլ բաներ որպէս ճշմարտութիւն ցոյց չտայ:

Այս աշխատանքը կը ներկայացնէ շատ ատելի համառօտ կերպով, այնինչ այլ ուրիշ մեկնիչներ զայն կը ներկայացնեն շատ ատելի ընդարձակ: Ամենպարագայի, Գրիգոր Նարեկացի Երգ Երգոց գիրքի մեկնութեամբ կու գայ ցոյց տալու եւ խօսելու սիրոյ մասին, որպէսզի մարդկային ամենագորեղ զգացմունքը, եւ այս սիրոյ կապը Աստուծոյ եւ մարդ արարծի միջեւ, եւ առաւել եւս Յիսուս Քրիստոսի եւ Եկեղեցիին:

12-րդ դարու կիսուն Գրիգոր Նարեկացի կը սրբադասուի, ու անոր յիշատակը կը փօնուի թարգմանիչ վարդապետներու շարքին հետ, այսինքն՝ Հոկտեմբեր ամսուն երկրորդ շաբաթը: